



258

# ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N. Y. 10016 212 686-0710

Archbishop Torkom Manoogian, Primate

Թիւ 28045  
Յունուար 17, 1988

Արժանաշնորհ  
Տ. Յուսիկ Քհնյ. Նշանեան  
Ալմամեայ Հովիւ  
Ս. Երբորդութիւն Եկեղեցւոյ  
Թորոնթօ.

Միրելի Տէր Յուսիկ,

Ամենայն Հայոց Կենափառ Հայրապետ, Նորին Ս. Օծութիւն Տ.Տ. Վազգէն Առաջին Կաթողիկոս, 1982 նոյեմբեր 22 թուակիր նամակով կը յայտնէ թէ Գանատայի նոր կազմուող թեմին համար պատրաստուած Կանոնադրութեան նախագիծը կը նկատէ՝ ընդունելի հիմք, ընթացք տալու համար նոր թեմի կազմաւորման աշխատանքներուն եւ այս նախագիծի տրամադրութիւններուն համաձայն գումարելու Գանատայի անդրանիկ Պատգամաւորական ժողովը . . . :

Զեզի կը յիշեցնենք Թեմական Խորհուրդի հետ մեր պատրաստած նախագիծը Հայոց Եկեղեցւոյ Գանատայի թեմը կազմակերպելու համար առնուելիք քայլերուն, Փետրուար 19, 1981ին վաւերացուած եւ Գանատայի մեր եօթը համայնքներուն ղրկուած:

Այդ նախագիծին համաձայն Գործադիր Մարմին մը նշանակուեցաւ որ Մարտ 28էն մինչեւ Յուլիս 31, 1981, հինգ նիստերու մէջ վերանկատեց Գանատայի թեմի Կանոնադրութեան յօդուածները, զանոնք ներկայացուց մեզի եւ Թեմական Խորհուրդին: Եւ մենք Կանոնադրութիւնը ղրկեցինք Վեհափառ Հայրապետին ի վաւերացումն:

Ներկայիս պատրաստ ենք առնելու յաջորդ քայլերը նախագիծին մէջ յիշուած:

Ուստի կը հրահանգենք ձեզ որ 1983 Յունուարին մինչեւ Մարտ գումարութելիք ծխական Անդամական ժողովի օրակարգին վրայ դնէք հետեւեալ մասնաւոր հարցերը.

- Հնտրութիւն թեմական պատգամաւորներու Գանատայի առանձին թեմի անունով գումարութելիք առաջին թեմական Պատգամաւորական ժողովին համար:

Գանատայի թեմի Կանոնադրութեան Յօդուած Դ., Գլուխ Ա., Հատուած 55ի տրամադրութեան համաձայն,՝՝ հւրաքանչիւր ծուխ իրաւունք ունի իր անդամներու թիւին համեմատ աշխարհական պատգամաւորներ ունենալ թեմական Պատգամաւորական ժողովին մէջ, ըստ հետեւեալին.

Մինչեւ 150 անդամ ունեցող ծուխը կ'ունենայ երեք (3) պատգամաւոր, 151-էն 200՝ չորս (4) պատգամաւոր, 201-էն 250՝ հինգ (5) պատգամաւոր, 251-էն 300՝ վեց (6) պատգամաւոր, 301 կամ աւելին եօթը (7) պատգամաւոր:

ծուխ մը եօթը (7) ընտրուած պատգամաւորներէ աւելի չի կրնար ունենալ:՝՝

Եւ Յօդուած Դ., Գլուխ Ա., Հատուած 56ի տրամադրութեան համաձայն,՝՝ թեմական ժողովի պատգամաւորները կ'ընտրուին երեք (3) տարուան շըրջանի մը համար: Ամէն տարի, իւրաքանչիւր ծուխի պատգամաւորներուն մէկ-երրորդը կը դադրի պաշտօնավարութենէ: Առաջնորդը եւ թեմական Խորհուրդը հրահանգ կու տան ծուխերուն կատարելու պատգամաւորներուն նոր ընտրութիւն: Անձնափոխանորդ կը նկատուին անոնք որ նոյն ընտրութեան ընթացքին ստացած են յաջորդ բարձրագոյն քուէն իրենց առաւելութեան կարգով: Բոլոր ծուխերը կ'ընտրեն պատգամաւորները եւ կը նշանակեն իւրաքանչիւր պատգամաւորի պաշտօնավարութեան տարիներու թիւը: Երբ թեմական Պատգամաւորական ժողովը նոր կը կազմուի պատգամաւորներուն մէկ-երրորդը կ'ընտրուի մէկ (1) տարուան պաշտօնավարութեան համար, միւս մէկ-երրորդը՝ երկու (2) տարուան եւ վերջին մէկ-երրորդը՝ երեք (3) տարուան համար:՝՝

Հնտրութիւնները պիտի կատարուին հետեւեալ կերպով.

1.- Հնտրողական Յանձնախումբը պիտի ճշդէ ծուխին արատու անդամներուն ստոյգ թիւը, համաձայն 1982 Յունուարին գումարուած ծխական Անդամական ժողովի արձանագրութեան:

2.- Հնտրողական Յանձնախումբը պիտի ճշդէ թիւը պատգամաւորներուն որ ծուխը իրաւունք ունի ընտրելու, Կանոնադրութեան Յօդուած Դ., Գլուխ Ա., Հատուած 55ի տրամադրութեան համաձայն, եւ ծխական ժողովին պիտի ներկայացնէ ընտրելիներու երկպատիկ ցանկը:

3.- Եթէ ծուխը իրաւունք ունի իր ներկայ պատգամաւորներուն թիւին վրայ յաւելում ընելու, Ընտրողական Յանձնախումբը պէտք է պատրաստէ երկպատիկ ցանկ մը ընտրելիներու, ամբողջացնելու համար ծուխին ներկայ պատգամաւորներուն թիւը:

4.- Գործադրելու համար կանոնադրութեան Յօդուած Դ., Գլուխ Ա., Հատուած 56ի տրամադրութիւնը եւ Ծշղելու համար իւրաքանչիւր պատգամաւորի ծառայութեան տարիները, Ընտրողական Յանձնախումբը առաջարկ մը պարտի ներկայացնել ծխական Անդամական ժողովին:

5.- Մինչեւ Գանատայի թեմին պաշտօնապէս յայտարարուիւը իբրեւ անջատ եւ առանձին թեմ, ծուխին ներկայ թեմական պատգամաւորները եւ ծխական Խորհուրդի անդամները կը շարունակեն իրենց պաշտօնները եւ պատասխանատուութիւնները համաձայն Հայց. Եկեղեցւոյ Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան թեմի Կանոնադրութեան եւ Ենթակայ Առաջնորդին եւ թեմական Խորհուրդի եւ թեմական Պատգամաւորական ժողովի իշխանութեան:

6.- Կատարուած ընտրութիւններու արդիւնքը պէտք է ներկայացնէք մեզի եւ թեմական Խորհուրդին, որպէս զի Գանատայի նոր թեմի անունով ընտրուած պատգամաւորները հրաւիրենք գումարուելիք առաջին թեմական Պատգամաւորական ժողովին, որուն թուականը, տեղը եւ օրակարգը պիտի յայտնենք իր ժամանակին:

7.- Գանատայի առանձին թեմը կազմակերպելու համար պատրաստուած նախագիծին մէջ յիշուած Գործադիր Մարմինին պաշտօն յանձնած ենք որ առաջին առիթով՝ Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ Գանատայի թեմը՝ արծանագրեն (ինքօրփօրէյթ) իբրեւ գանատական իրաւական անձնաւորեալ կազմակերպութիւն:

Գործադիր Մարմինը նաեւ պաշտօն ունի Ծշղելու տեղը եւ թուականը գումարուելիք առաջին թեմական Պատգամաւորական ժողովին, 1983 Յունիս ամսուան ընթացքին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԱՌՊՈՍ  
Առաջնորդ

Ց. Գ. -

1.- Նօրթ Եորբէ Ս. Խաչ Հայց. Առաքելական Եկեղեցւոյ ծուխի տրատու անդամներուն թիւը պիտի Ծշղուի համաձայն 1982 Սեպտեմբերին գումարուած Անդամական ժողովի մէջ արծանագրուած տրատու անդամներու. թիւին:

2.- Օթթառուայի ծխական Խորհուրդը պիտի կատարէ Ընտրողական Յանձնախումբի պաշտօն եւս: Տրատու անդամ պիտի նկատուին համայնքին այն անձերը որոնք Գանատայի թեմի նոր Կանոնադրութեան Յօդուած Գ., Գլուխ Ա., Հատուած 5, 7 եւ 8-ի համաձայն կ'արծանագրուին տրատու անդամ: Այս առաջին արծանագրուելուն պայմանաժամ կը դնենք թեմական Պատգա-

մաւոր ընտրելու համար ծխական Խորհուրդի նշանակելիք Անդամական ժողովի թուականէն երկու շաբաթ առաջ: Եթէ ժողովի թուականը Մարտ 30 է, մինչեւ Մարտ 15 արձանագրուած անդամներ կընան քուէարկութեան մասնակցիլ:

Այս առաջին ծխական Անդամական ժողովին արձանագրուած ոեւէ անձ քը-ւէարկելու իրաւունք պիտի ունենայ, անտես առնելով Յօդուած Գ., Գը-լուի Ա., Հասուած 7-ի մէջ յիշուած պայմանները: